ՀԱՄԱՏԵՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուին հաստատելու և համապատասխան փաստաթղթերը ներկայացնող հասարակական կազմակերպությանն ընտրելու վերաբերյալ

14.08.2023թ.

1. «Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակ» ՀԿ-ն՝ ի դեմս նախագահ Արթուր Սարգսյանի,
2. «Արազա» բարեգործական ՀԿ-ն՝ ի դեմս նախագահ Թամարա Աբրահամյանի,
3. «Վարորդի ընկեր» իրավապաշտպան ՀԿ-ն՝ ի դեմս նախագահ Տիգրան Քեյանի,
4. «Հայք» համահայկական արհեստակցական կազմակերպությունների միություն ՀԿ-ն՝ ի դեմս նախագահ Երվանդ Թարվերդյանի,
5. «Անկախ դատավոր» իրավապաշտպան ՀԿ-ն՝ ի դեմս նախագահ Պարգև Օհանյանի

Առաջնորդվելով հասարակական կազմակերպությունների կողմից անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածություններ ներկայացնելու գործընթաց սկսելու մասին հայտարարությամբ և ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի «Հասարակական կազմակերպությունների կողմից թեկնածություններ առաջարկելու կարգը սահմանելու մասին» N 736-Ն որոշմամբ սահմանված հասարակական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածություններ առաջարկելու կարգով՝ կազմեցին համատեղ արձանագրություն հետևյալ հարցերի շուրջ.

1. <u>Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուների ցուցակը հաստատելու մասին</u>:

Հասարակական կազմակերպությունների ղեկավարները, քննարկելով անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածությունները, ինչպես նաև հաշվի առնելով թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ հաստատեցին անձնական

տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուների ցուցակը՝ ցուցակում ընդգրկելով մեկ թեկնածու՝ ի դեմս Գրիգոր Ալբերտի Ներսիսյանի:

Քվեարկության արդյունքներ՝ «Կողմ»–«միաձայն», «Դեմ»–«ոչ», «Ձեռնպահ»–«ոչ»

2. <u>Համապատասխան փաստաթղթերը ներկայացնող հասարակական կազմակերպության ընտրության մասին:</u>

Հասարակական կազմակերպությունները, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 736-Ն որոշմամբ նախատեսված փաստաթղթերը ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնող կազմակերպություն ընտրեցին «Վարորդի ընկեր» իրավապաշտպան ՀԿ-ին:

Քվեարկության արդյունքներ՝ «Կողմ»–«միաձայն», «Դեմ»–«ոչ», «Ձեռնպահ»–«ոչ»

«Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակի» ՀԿ-ի նախագահ՝ _____ Ա. Սարգսյան

«Արազա» բարեգործական ՀԿ-ի նախագահ՝ _____ Թ. Աբրահամյան

«Վարորդի ընկեր» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ՝ _____ Տ. Քեյան

«Հայք» համահայկական արհեստակցական կազմակերպությունների միություն ՀԿ-ի նախագահ՝ _____ Ե. Թարվերդյան

«Անկախ դատավոր» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ՝

ՑՈՒՑԱԿ

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ(ՆԵՐԻ)

Հ/Հ	Ա.Ա.Հ
1.	Գրիգոր Ալբերտի Ներսիսյան

«Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակ» ՀԿ-ի նախագահ՝ Ա. Սարգսյան

«Արազա» բարեգործական ՀԿ-ի նախագահ՝ Թ. Աբրահամյան

«Վարորդի ընկեր» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ՝ Տ. Քեյան

«Հայք» համահայկական արհեստակցական կազմակերպությունների միություն ՀԿ-ի նախագահ՝ Ե. Թարվերդյան

«Անկախ դատավոր» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ՝ Պ. Օհանյան